

Առաւօտ է . ահաւասիկ մեր դիմացը կ'ենէ
զուարթատեսիլ հաւ մը , մերթ գլխին վրայ
կը բանայ հովակիար մը , մերթ կը դոցէ զայն ,
կարծեն առաւօտնեն աստղը կը բարեւէ .
միշտ կը բարժի , միշտ ահարեկ կը դողեր-
դայ : Սրբ հայրենիքն՝ չէ միայն Պնտուս ,
այլ և Արարատ և Կիլիկիա , Արցախ և Սիւ-
նիք : Աս նազելի համարուած է տեսպով և
բարեզ . Եղիպատացիներէն կը մեծարի , և ի
մեզ կը հանդիսանայ եղբայրսիրութեան օ-
րինակ և ուրախութեան նշանակ . անշոշտ
դուշակեցիր ընթերցող թէ ուպան է աս :

Մընկեն կը զամնանք Յապոպին գոյնզգոյն
փերաց և գեղանի ցցաններուն վրայ , աշ-
խոյժ թշչնիկ մը կարծես բոլորովին ստար
մեր աշխարհն՝ շուրաբած , ողոյ մէջ իւր թը-
ռիչներչ շարժական լըրիւրինսոսներ կը
գծէ : Միծան է աս , զոր ասմիկն կաթոքին
կը սիրէ , և ամենայն ինասէ կը տանի՞ վախ-
նալով թէ մի գուցէ իրեն կրկուն ծիծն խայ-
թեռով , կաթէ զրկէ կենդանին . և աստի
դուցէ հայկական քննուց անուամբ կոչուած է
ցիծառն . ցիծ — առնել :

Եարայարելի

Հ . Ս. Խ. Ռ. Ա. 6.



ՄԻՒԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Ի ԹՐԵՍՏ ԵՒ Ի ՎԻԵՆԱ

(1776-97)

(Եար. տես էջ 60)



Վիճնասի Միթարեան ուխտին տպա-
րանն և տպագրութիւնը , որ այնչափ փայլ
պիտի յաւելուին ժամանակաւ ազգային պայ-
արուեստին , իսխտ շափաւոր սկզբնաւորութիւն
մը ունեցան ի թթես :

Նոր մենաստան մը ի թթեստ հաստա-
տելու եռանկեամբ , հազիւ երկու տարի ան-
ցեր էր իրենց նոր հաստատելուն վրայ ,
առանց լքանելու ոչ նիթական միջոցաց ազակ-
ութենէ և ոչ իրաց և զիգուածոց ձախող
պարագաներէ , փութացին իրենց համար
մասնաւոր տպարան մը ունենալու աշխատու-

թեան ետեւէ ըլլալ , որուն արտունութիւնն
և կայսերական հրամանագիրն ընդունելով
յաստրիական պետութենէ , երկու ահսակ զիր
ձուլել տուին , նոր հայրերու և մարց վրայ ,
բոլորի և նոտր , իրենց ամէն կարեւոր
պարագայիւք , զիլագիրներով և ծաղկազրօք ,
և սկան տպագրութեան գործով զբաղիլ :

Առաջին հրատարակութիւնն՝ ստանաւոր
գուած մ'է ի պատի՝ իրենց մենաստանին
օգնականութեան և պաշտպանող ձեռք կար-
կասող կայսեր , մեծագիր երես մը միայն :
Բուն առաջին երկասիրութիւնն , 1776 թին
եղած է . և խորացիր կը կրէ . “ Յորդորակ
առ պաշտօնասիրութիւն սրբայ Աստուածա-
ծնի , Եւ ի յառաջաբանին կը ծանուցանեն
երախտապարա սրտիւ , թէ . . . ” Կամեցաք
զի տաշին պատու տպարանին լինիցի ի պա-
տի սրբայ Աստուածամօրն , իր ցոյց երախ-
տապատութեան մերոյ առ նա վասն այցելու-
թեանն , զոր հաւաամբ միջնորդութեամբ
նորա արարեալ մեզ Աստուծոյ , ”

Առաջին սարիներն բոլորովին տարրական և
ամենանշան տեստրակներ հրատարակուեցան
իրենց տպարանէն . և գտնուած դիրքերնուն
մէջ կարեի չէր աւելի բան մը յուսաւ . բայց
1783 թին և հետեւորդ տարիներուն մէջ ա-
ւելի կարեւոր և հետաքննական երկասիրու-
թիւնը ալ կ'ընծայուէին , յորոց ոմանք միա-
բանից թարգմանութիւնք էին , և այլք աշ-
խարհիկ ծանօթից և բարերարաց . ինչպէս
թուղթը զջինաց , Քաղաքավարութեան զիրք
ի 1783 , և հետեւեալ տարրոյն մէջ իզո-
րուի ասակը , վիպասանուրիւն Ամերիկոյ ,
Ճնորհենուրիւն մարդկային կենաց , և քիչ
շատ զործունէւթեամբ կը շարունակեն մին-
չեւ 1809 , յորում Աշետարան մը միայն
հրատարակուած կը գտնենք իրենց տպարա-
նէն :

Թէ Եւրոպիոյ քաղաքական դիրքէն և պա-
տերազմներէն թթեստ քաղաքին ձեռքէ ձեռք
անցնելէն , և թէ զրամական անձկութենէ կը
բռնապատին Միթարեանը ունեցածնին
շունցածնին թողուլ ու երթալ տպատանիլ
ի վիեննա մայորադար , կայսերական գեր-
դաստանին անմիջական հովանաւորութեան
տակ . կը ստանան վանք , բնակութիւն , հան-

զիստ զիւրակեցութեան միջոցներ ու տպարան. ու ինչպէս ի թրեստ, նոն ալ սրբազան երեխայրից մը իրենց տպարանին կ'ըլլայ Սրբոյ կուտին Մարիամու, Միսիթմարեան ուսխի մայրազութ պաշտպանին, վարուց պատմութիւնն (1842). որով և կը յաջողին ընդարձակել ու կարգաւորել իրենց բարոյական և նիմիական կեանքը և զօրծունէութիւնը :

թէ իրենց և թէ նախալնթացից փորձերէն խելամուաք թէ մեր ազդին մէջ ուպարանի զործը որչափ ապերախտ է, եթէ անոր մէջ միայն նիմիթական շահակրութիւն նկատուի, ընդարձակութիւն ուզեցին առաջ իրենց գործոյն՝ ազգային նեղ շրջանակի մէջ միայն շամփոփերով, այլ եւրոպական, մանաւանդ զերմաններէն լեզուով բազմատեսակ և բազմաթիւ հրատարակութիւններով և կայսերական արտօնագրով եկեղեցական պաշտամանց վերաբերեալ զրոց ապագրութիւններն, բոլոր Աւարիոյ ակրութեան մէջ՝ իրենց յատիկացնելով. որոյ վրայ աւելցուցին ապա՝ Լուսարտիոյ և վէենեակոյ ակրութեան մէջ, որ նոյն աւտեն աւտորիական հպատակութեան ենթակայ էր, բոլոր պարոցաց մէջ գործածակելիք զրոց ապագրութիւնն իրենց նեպականելով :

Բայց ասոնց նման առանձնաշնորհութեանց վայելք չէին կրնար հաճոյ ըլլալ երկրին արպագրապետաց : 1848ին հանդիպած յեղափոխութիւնն՝ Աւարիոյ մէջ ալ անեցաւ իր ազդեցութիւնը, և Փերգինանդ Ա. կայսր բըռնադատուցաւ հրաժարել իր թագէն՝ ի շնորհն իր եղբօրը և եղբօրորդույն : Ութեւտասնամեայ պատանեակ կայսրն՝ Փրանկիսկոս Յովսէփ Ա., Հարուուրգեան զանցից վրայ բազմելով, և ծողովրդեան սպառնական թափանձնակէն բռնազատուելով՝ երկրին օրինաց նախկին ենթագրեալ խստութիւնները մեղմացրնելու, ուրիշ զանազան պատառթեանց հետ զոր կը խնդրէին, ապագրութեան պատութիւն և չորոնց, և այս նկատմամբ եղած և արուած ամէն առանձնաշնորհութիւնները վերաց և ոչնչացուց :

Միսիթմարեան տպարանն անէկ ետքը աւելի կերպով մատագրութիւնը դարձաց հայկական մասը բարուցելու : Արդէն 1840էն ի վեր սկսեր էին շահաւակ և օպակարագրոյն հրատարա-

կութիւններ ընծայել : Հին և նոր օտար մատենագրութեանց այլ և այլ երկասիրութիւններ սկսեր էին թարգմանուիլ, եւրոպական լեզուաց ուսումը զիւրացընելու համար այլեւայլ բառարանը և քերականութիւններ . 1845էն կը սկսէին հրատարակուիլ Արամեան մատենագրանին հատորը, համանուն ընկերութեան նպաստիք, և 1849ին Երովաց շաբաթական լրազիրը :

Գրիթէ մի և նոյն միջոցին, ի Պարիս գաղղիոյ հասաւատուած Միսիթմարեանց ձեռներցութեամբ, կը մտածուէր հայկական գրերու, թէ զիւրացիք՝ բոլորդիր և թէ նոտր տարից նոր փոփոխութիւն մը տալ աւելի եւրոպական ճաշական և վայելուզ ձեւերով. աւ անոնցման կը սկսէին տպագրուիլ՝ նախ գաղղիացի տպագրապետաց քով, և աստ Արամեան կոչուած մասնաւոր հայ ապարանէն այլեայլ հրատարակութիւնը : Վիեննայի տպարանն ալ չուզեց ետ մալ այդ նորութենէն. մանաւանդ թէ աւելի կերպով մը ճոխացընելու և աւելի աշքի հանցական կերպարանը տալու ջանին ունեցա, ամէն սեսակ հայերէն տարից ընանիր դրաշներ պարաստելով և ձաւելով, ազգային և օտար տպարանաց ալ վաճառելով :

Եղաւ ատեն յորում ըսուեցաւ թէ տպարանին սեպհականութիւնն աւստրիացոյ մը անցեր էր, և իր անունը սկսաւ զրուիլ նոյն խոկ հայերէն հրատարակութեանց վրայ . բայց քիչ աւելց, և ներկայ ուսումնասէր և բազմանմաւ Արամեանը օրով կրիկն Միսիթմարեան գաւանալով՝ աւելի բարգաւաճ վիճակ մը ստացաւ. այնպէս որ ի մեծ պատիւ Միսիթմարայ ուսխտին և ազգիս ընդհանրութեան, կը վկայուի աննախանձ անձնիներէ, թէ ի վիեննա՝ կայսերական տպարանէն ետք՝ սատաշին գործարանն է այլեւայլ ազգաց յատուկ տարից ճոխութեամբ, աստ գրութեան մարգրութեամբ, ճաշակի գեղով և ընարութեամբ : Մանօթ են և ազգին մէջ տածած՝ Հանդիկ ամսօրեայ լրազիրն և այլ և այլ մատենագրաններն, Երովաց զանազան մայրաբաղաքաց և Վիեննայի Միսիթմարեանց գրատան մէջ գտնած հայ Զեռագրաց ցուցակը :